ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՆՄԱՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/28, 29.03.2022թ.

Շտկման ամսաթիվը՝ 31.03.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ

Պատվիրատու՝ Ջրային կոմիտե

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա»

Գնման առարկան՝ ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում ՍԿԱԴԱ համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման աշխատանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրերով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել 27.01.2022թ. թիվ 4 արձանագրությամբ «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ որոշումը,
2. հրավիրել գների նվազեցման շուրջ վարվող նոր բանակցություններ,
3. դադարեցնել 02.02.2022թ. թիվ 5 արձանագրությամբ և «Շին մոնտաժ տրանս» ՍՊԸ- և «Նարսեր Շին» ՍՊԸ կոնսորցիումին 4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումը,
4. դադարեցնել 18.03.2022թ. թիվ 6 արձանագրությամբ «Արտեզիա» ՍՊԸ-ին 4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ֆ. ՄԱՆԳՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ
քննող անձ Լևոն Օհանյանին
ընթացակարգ № ԳԲՔԱ-ԼՕ-2022/28
Բողոքաբեր՝
ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ
«ԱՐԱԶԵՆ» Հ/Ձ ՍՊԸ
գրանցման համար՝ 271.110.02189
հասցե՝ ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թ.
ներկայացուցիչ՝
Հարություն Օհանյանից
նույնականացման քարտի տվյալներ՝ 011778511,
տրված 09.08.2021թ.-ին, 004-ի կողմից
պատվիրատու՝
Ջրային կոմիտե
ք. Երևան, Վարդանանց 13ա
գնման ընթացակարգի
ծածկագիրը և առարկան
№ ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա
Կոտայք ՋՕԸ-ի, Սյունիք ՋՕԸ-ի, <<Ջրառ>> ՓԲԸ-ի
և Արարատ ՋՕԸ-ի սպասարկման տարածքներում
ոռոգման համակարգերի մայր և երկրորդ
կարգի ջրանցքների բաժանարար կետերում
ՍԿԱԴԱ SCADA համակարգով հագեցած
ջրաչափական սարքավորումների
տեղադրման աշխատանքներ

ԲՈՂՈՔ (համանման)

1. **Գործի նախապատմությունը,**

03.12.2021թ.-ին ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեն՝ (այսուհետ՝ Պատվիրատու) armeps.am էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ էլեկտրոնային համակարգ) միջոցով հայտարարել է բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ): Մրցույթի հիման վրա ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ «ԱՐԱԶԵՆ» Հ/Ձ ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 4-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է հայտ (այսուհետ՝ Հայտ): Պատվիրատուն Հայտը մերժել է և ն դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու նպատակով: ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/66 ծածկագրով ընթացակարգը քննել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանը, ով 11.03.2022թ.-ին ընթացակարգի վերաբերյալ կայացրել է որոշում, որտեղ արձանագրել է, որ «Արազեն հայ-Գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և

մերժելու մասին ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումն ոչ իրավաչափ է:

2. Գործի փաստական հանգամանքները.

2.1. Ընկերությունը իր կողմից ներկայացված Հայտի թիվ 1 հավելվածում՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում հայտարարության 2-րդ կետի 2-րդ պարբերությունում՝ որպես Ընկերության իրական շահառուների վերաբերյալ տեղեկություն պարունակող կայքէջի հղում նշել է իր տվյալները պարունակող e-register.am կայքէջի հղումը՝ https://www.e-register.am/am/companies /1322044, քանի որ համոզված էր, որ դա բաց մրցույթին մասնակցելու դիմում հայտարարության 2-րդ կետի 2-րդ պարբերությամբ սահմանված իրական շահառուների վերաբերյալ տեղեկություն պարունակող կայքէջի հղումն է:

2.2. 19.01.2022թ-ի թիվ 2 արձանագրությամբ Ընկերության Հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ արձանագրությամբ նշվել է, որ Ընկերության ներկայացրած հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարգիրը (հավելված 1.3) և Հայտում առկա փաստաթղթերի էլեկտրոնային թվային ստորագրությունները վավեր չեն: Նշյալ անհամապատասխանությունների վերաբերյալ ընկերությունը ծանուցվել է **20.01.2022թ.-ի ժամը 17:13-ին**, որով առաջարկվել է մինչև **21.01.2022թ.-ի ժամը 18:00-ն** անհամապատասխանությունները շտկել և ներկայացնել Պատվիրատուին, այսինքն՝ անհամապատասխանությունները շտկելու և Պատվիրատուին ներկայացնելու համար սահմանվել է ոչ թե մեկ աշխատանքային օր, այլ ավելի քիչ ժամանակահատված:

2.3. 27.01.2022.-թ-ի թիվ 4 արձանագրությամբ Ընկերության հայտը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ վերջինս չի շտկել անհամապատասխանությունները:

2.4. 02.02.2022թ.-ի թիվ 5 արձանագրությամբ նշվել է, որ այդ նիստի ընթացքում կազմակերպվել են գների նվազեցման շուրջ բանակցություններ և բանակցությունների արդյունքում «Շին մոնտաժ տրանս» ՍՊԸ և «Նարսեր Շին» ՍՊԸ կոնսորցիումը (այսուհետ՝ Կոնսորցիում) 4-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից: Այնուհետև՝ 18.03.2022թ.-ի թիվ 6 արձանագրությամբ Կոնսորցիումը զրկվել է պայմանագիրը ստորագելու իրավունքից և 4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Արտեզիա» ՍՊԸ-ն: «Արտեզիա» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ պայմանագիր կնքելու մասին որոշումը 24.03.2022թ.-ին հրապարակվել է տեղեկագրում:

3. Դիրքորոշման հիմքերն ու հիմնավորումները.

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝

«1. Եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:

3. Մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:»

Վերոգրյալից հետևում է, որ եթե մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա պատվիրատուն հայտերի բացման և գնահատման նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնում է և նույն օրը էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին առաջարկելով՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը հայտում տեղ գտած անհամապատասխանությունները շտկել: Ընդ որում շտկված հայտը մասնակիցը պատվիրատուին է ուղարկում էլեկտրոնային փոստի միջոցով: Հաշվի առնելով նշյալ հանգամանքը կարող ենք եզրահանգել, որ շտկված հայտը գնահատող հանձնաժողովին կարող է ուղարկվել մինչև կասեցման ժամկետի՝ օրվա ժամը քսանչորսը, քանի «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը իսկ նույն հոդվածի 3-րդ մասի հաաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

Վերոգրյալից հետևում է, որ պատվիրատուն հայտը շտկելու համար ժամանակահատված սահմանելիս այն պետք է սահմանի այնպես, որ շտկված հայտը ներկայացնելու համար ժամանակահատվածը լինի մինչև հայտը շտկելու վերաբերյալ ծանուցումը մասնակցին ուղարկելու օրվան հաջորդող օրվա ժամը 24:00-ն: Այսինքն՝ մասնակիցը իրավունք ունի հայտը շտկել և շտկված հայտը էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել պատվիրատուին մինչև հայտը շտկելու վերաբերյալ ծանուցումը ստանալու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 24:00-ն:

Ինչպես երևում է սույն գործի փաստերից, Պատվիրատուն 20.01.2022թ.-ի ժամը 17:13-ին Ընկերությանը ծանուցել էր Հայտում հրավերի պահանջների նկատմամբ առակա անհամապատասխանության մասին: Նույն ծանուցմամբ հայտը շտկելու ու շտկված հայտը էլեկտրոնային փոստի միջոցով Պատվիրատուին ներկայացնելու համար վերջնաժամկետ էր սահմանվել 21.01.2022թ.-ի հունվարի 25-ի ժամը 18:00-ն: Այսպիսով, նշյալից կարող ենք փաստել, որ Պատվիրատուն խախտել է վերը նշված իրավական ակտերով սահմանված նորմերը, քանի որ հայտը շտկելու և շտկված հայտը ներկայացնելու համար սահմանել է մեկ աշխատանքային օրվանից քիչ ժամանակահատված, մասնավորապես՝ 21.01.2022թ.-ի ժամը 24:00-ի փոխարեն հայտը շտկելու և շտկված հայտը ներկայացնելու ժամանակահատված է սահմանվել մինչև 21.01.2022թ.-ի ժամը 18:00-ն: Նշյալից կարող ենք արձանագրել է, որ «Արազեն հայ-Գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումն ոչ իրավաչափ է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» 46-րդ և 50-րդ հոդվածներով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին.

խնդրում ենք՝

պարտավորեցնել թիվ ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝

- Դադարեցնել 27.01.2022թ.-ի թիվ 4 արձանագրությամբ ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ «ԱՐԱԶԵՆ» Հ/Ձ ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ որոշումը:
- Հրավիրել գների նվազեցման շուրջ նոր բանակցություններ:
- Դադարեցնել 02.02.2022թ.-ի թիվ 5 արձանագրությամբ «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ և «Նարսեր Շին» ՍՊԸ կոնսորցիումին 4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումը:
- Դադարեցնել 18.03.2022թ.-ի թիվ 6 արձանագրությամբ «Արտեզիա» ՍՊԸ-ին 4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումը:

Կից ներկայացնում ենք,

- Ներկայացուցչի լիազորագիրը և անձը հաստատող փաստաթղթի արտատպումները բնօրինակներից:
- Բողոքի վճարի վերաբերյալ փաստաթղթի պատճենը:

ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ «ԱՐԱՋԵՆ» Հ/Ձ ՍՊԸ-ի
ներկայացուցիչ Հարություն Օհանյան

Digitally signed by OHANYAN HARUTYUN 4009830433